ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/06/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 28 մարտի 2022թ.

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա.Փաշինյանի, Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի մարտի 28-ին, քննելով ՀՀ անվտանգության խորհրդի նախկին մամուլի քարտուղար Ալբերտ Հովհաննեսի Ներզեթյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը և 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մարտի 9-ին հարուցված թիվ ՎԻՎ/06/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ ՀՀ անվտանգության խորհրդի նախկին մամուլի քարտուղար Ալբերտ Հովհաննեսի Ներզեթյանի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը և 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագրեր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չեն:

1.2 Հանձնաժողովի կողմից 2021 թվականի օգոստոսի 25-ին Ալբերտ Հովհաննեսի Ներզեթյանին գրավոր ծանուցում է ուղարկվել 2021 թվականի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը և 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագրերը: Նշված ծանուցումը Ալբերտ Ներզեթյանի կողմից ստացվել է 2021 թվականի օգոստոսի 30-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում համապատասխան հայտարարագրերը չեն ներկայացվել:

1.3 Հանձնաժողովի՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 01/1043/1-2021 գրությամբ Ալբերտ Ներզեթյանը 2021 թվականի դեկտեմբերի 14-ին՝ ժամը 10:00-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, սակայն Հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցագիրը վերջինիս կողմից չի ստացվել:

1.4 Հանձնաժողովի՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 01/1235/1-2021 գրությամբ Ալբերտ Ներզեթյանը 2022 թվականի հունվարի 18-ին՝ ժամը 10:00-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, Հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցագիրը վերջինիս կողմից կրկին չի ստացվել:

1.5 Հանձնաժողովի՝ 2022 թվականի հունվարի 20-ի թիվ 01/151/1-2022 գրությամբ Ալբերտ Ներզեթյանը 2022 թվականի փետրվարի 8-ին՝ ժամը 10:30-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, սակայն Հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցագիրը վերջինիս կողմից կրկին չի ստացվել:

1.6 Հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ 01/354/2-2022 գրությամբ Ալբերտ Ներզեթյանը 2022 թվականի մարտի 9-ին՝ ժամը 10:30-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, նշված ծանուցագիրը Ալբերտ Ներզեթյանի կողմից ստացվել է 2022 թվականի փետրվարի 25-ին:

1.7 2022 թվականի մարտի 9-ին Ալբերտ Ներզեթյանի մասնակցությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/06/22 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով: Արձանագրությունը ստորագրվել է Ալբերտ Ներզեթյանի կողմից, և հանձնվել է նրան առձեռն:

1.8 Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 9-ի որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/06/22 գործի վարույթը: Վարչական

իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ փոստային առաքման միջոցով ներկայացվել է Ալբերտ Ներզեթյանին:

1.9 Վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Ալբերտ Ներզեթյանի բացակայությամբ 2022 թվականի մարտի 28-ին՝ ժամը 12:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Ալբերտ Ներզեթյանի կողմից միջնորդություններ չեն ներկայացվել:

1.10 2022 թվականի մարտի 25-ի դրությամբ Ալբերտ Ներզեթյանի կողմից ներկայացվել է 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը և 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ընթացքում Ալբերտ Ներզեթյանը գրավոր բացատրություն է ներկայացրել այն մասին, որ պաշտոնից հեռանալուց հետո ինքը չի իմացել, որ պետք է հայտարարագիր լրացնի նաև 2021 թվականի և դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից ուղարկված առաջին ծանուցումը ստացել են իր ընտանիքի անդամները, և ենթադրելով, որ այլևս պետական համակարգում չի աշխատում, մտածել են, որ սխալ է ուղարկված ծանուցագիրը, և իրեն չեն տեղեկացրել:

Սակայն, այնուամենայնիվ, տեղեկանալով, ուշացումով հանձնել է հայտարարագրերը: Խնդրել է ներողամտությամբ և հասկանալով մոտենալ իրավիճակին:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/06/22 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ ՀՀ անվտանգության խորհրդի նախկին մամուլի քարտուղար Ալբերտ Հովհաննեսի Ներզեթյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը և 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ անվտանգության խորհրդի նախկին մամուլի քարտուղար Ալբերտ Հովհաննեսի Ներզեթյանն իր պաշտոնավարման ընթացքում «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.9 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Ալբերտ Ներզեթյանի կողմից մինչև գործի քննության օրը Հայտարարագրերը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ինչ վերաբերում է Ալբերտ Ներզեթյանի դիրքորոշմանն այն մասին, որ պաշտոնից հեռանալուց հետո ինքը չի իմացել, որ պետք է հայտարարագիր լրացնի նաև 2021 թվականի և դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի վերաբերյալ, Հանձնաժողովի կողմից ուղարկված առաջին ծանուցումը ստացել են իր ընտանիքի անդամները, և ենթադրելով, որ ինքը այլևս պետական համակարգում չի աշխատում, մտածել են, որ սխալ է ուղարկված ծանուցագիրը, և իրեն չեն տեղեկացրել, սակայն, այնուամենայնիվ, տեղեկանալով, ուշացումով ինքը հանձնել է հայտարարագրերը, նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ, թեև նշված հայտարարագրերը Ալբերտ Ներզեթյանի կողմից ներկայացվել են Հանձնաժողով, սակայն դրանք ներկայացվել են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, իսկ վերոնշյալ հայտարարությունները հիմք չեն օրենքով սահմանված պարտականությունների (Հայտարարագրերը սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու) կատարումից ձեռնպահ մնալու համար:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

ՈՐՈՇԵՑ

1. Ալբերտ Ներզեթյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/06/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալբերտ Ներզեթյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**